

ԴՈՒՈՐ

Մայիսը պուճուր հումորով պուճուր տղամարդ էր, իր քաշին մի երազանք ուներ՝ «Զապորոժեց» առներ, դրանով աշխատանքի գնար ու գար, ազատ ժամերին լվար ու կոկեր, ազատ օրերին, ընտանյոք, դուրս գար քաղաքից... մի օր էլ տեսար, քշեց ծովափ, Սև ծովի ափերը: Ինչո՞ւ չէ, մտածում էր, մեքենան մեքենա է. պուճուր է, բլոժի նման, շարժիչն էլ առաջը չի, որ աչքդ վրան պահես՝ կարող է ճանապարհին կորչի ու չիմանաս, բայց էլի հեծանիվ չի, չորս անիվ ունի: Չորս, մեկն էլ, համենայն դեպս, Մայիսի վստահությունը, որ իր պես մարդուն, արդար քրտինքով ապրող մեկին ճանապարհին փորձանք չի պատահի:

Ավտոմեքենան անմաշ երազանք էր Մայիսի համար: Ամեն անգամ այդ չնչին երազանքի իրականանալուն մի բան խանգարում էր: Եվ Մայիսը ապրում էր իր երազանքի հետևից կրնկակոխ գնալով. տասնհինգ տարի առաջ վարորդական իրավունք էր ձեռք բերել, տոմսը ամեն տեսակ թղթերի ու փաստաթղթերի, էլեկտրականության, գազի, կոմունալ այլևայլ վարձերի անդորրագրերի հետ կարի մեքենայի գգրոցում պահած, հինգ տարին մեկ վերաքննվում-պահպանում էր իր վարորդական իրավունքը... Եվ այդ ընթացքում երեխաներ էր ունենում՝ հոր նման շատ երեխաներ, և գնալով խնայողություն անելը դժվարանում էր: Գնալով՝ խնայողամարկղում ունեցածի վրա իջնող թղթադրամները ուշ աշնան տերևաթափի նման իջնում էին չկամորեն, հատ-հատ, պատահական: Եվ գնալով, նրա երազած մեքենան կատարելագործվում-շքեղա-

նում, նոր, ավելի բարձր գին էր ունենում: Բայց Մայիսը կոտոր չէր ընկնում: Ամեն անգամ, երբ մեքենայի իր հերթը հասնում էր, հերթը զիջում էր ուրիշին: Պարտք անել չէր ուզում: Ուզում էր իր ունեցածով առնել, որ մեքենատիրոջ ուրախությունը չպղտորվի պարտապանի սրտնեղությամբ:

Այս չխամրող երազանքով իր քառասուն տարիներից քսանը նա շարքային գրաշար էր աշխատում շարքային մի տպարանում, որտեղ բազմատիրաժ թերթեր, թերթոններ, գրասենյակային բլանկներ ու նման շատ ուրիշ բաներ էին տպում, երբեմն էլ, ներքին կարգով, հարսանյաց հրավիրատոմս կամ այցետոմսը իրեն արդեն երևելի անձնավորությունների շարքը դասած մեկի, որի անունը փայլատառ դրոշմելու համար տպարանի պահեստում մի բուռ բրոնզափոշի ճարվում էր: Հասկանալի է, որ Մայիսը այդ կարգի պատվերների հետ գործ չէր ունենում: Եվ առհասարակ որևէ «շտապ» գործ հանձն չէր առնում, նույնն է թե՛ հանձնարարող չկար: Միակ բացառությունը, թերևս, ֆուտբոլի խաղի տեղեկատուն էր, որի չորս էջը խնամքով, երկու օրում կապում, խաղից օր առաջ տպագրական մեքենայի տակից դուրս քաշած մի քանի օրինակ տանում-բաժանում էր հարևաններին, և սրանք օր առաջ իմանում էին թիմի վաղվա մարտական կազմը: Եվ Մայիսը հարևանների աչքին բարձրանում էր, ինչպես եթե այդ կազմով թիմը դաշտ հանող մարզիչը ինքը լիներ:

Ֆուտբոլային տենդի օրերին էր, Մայիսը, կարծես թե, դուրս էր գալիս հունից: Մնացած ժամանակ և մնացած ամեն ինչում կյանքի սեփական տեմպը ուներ. աշխատում էր դանդաղ, խոսում էր դանդաղ, քայլում էր նույնպես դանդաղ և միայն մարզադաշտի ճանապարհին, ուր գնում էր միշտ՝ գրպանում ունենալով տեղեկատուն կազմելու դիմաց ստացած տասկոպեկանոց տոմսը, որ տալիս են ֆուտբոլի դպրոցի սաներին, գնում էր՝ մարզակումբի անդրկուլիսյան անցուդարձին փոքր ի շատե ծանոթ մեկի գերազանցության զգացումով մահկանացու ֆուտբոլա-

սերների հանդեպ, — միայն այդ ժամանակ, ամբոխի ընթացքին համաքայլ, իրեն թույլ էր տալիս շտապել:

Այսպես էր միշտ: Համենայն դեպս, մինչև այն օրը, երբ Մայիսին այդ դեպքը պատահեց: Այսինքն հարկ չկա շատ լուրջ ընդունելու, թե Մայիսին կարող էր իրոք արտառոց բան պատահել: Մայիսի նման մարդուն կյանքում մի բան պատահում կամ չի պատահում: Դեպք ասելով պիտի հասկանալ անսպասելի բան. անսպասելի լավ կամ անսպասելի վատ: Մեկին թե մյուսին ենթակա լինելու համար հարկավոր է արարք թույլ տալ: Եվ անսպասելին սպասել իբրև հատուցում: Իսկ Մայիսը արարք թույլ չի տալիս, ինչ որ կյանքը կտար, դրա տերն էր, իրեն դիպվածի հարվածի տակ չէր դնում, դիպվածի ողորմության ճանապարհին կանգնած չէր լինում, իսկ նա, որ ապահովագրված է մեկից, զրկված է և մյուսից... Բայց թե՛ ինչ է նշանակում արարք թույլ տալ կամ թույլ չտալ, ինչ է նշանակում ապահովագրված լինել ինչ-որ բանից: — Ոչինչ չի նշանակում:

Եվ ուրեմն Մայիսին այդ բանը պատահեց:

Խնդումներես և խոնարհ, դեռահաս պատանու կազմվածքով, — Մայիսին տեսնողը չէր ասի, թե հասուն երեխաներ ունի, այնինչ հինգշաբթի տուն գալով, ձեռքն առավ որդու զորակոչի ծանուցագիրը: Ինչ անսպասելի բան կար, 18 տարեկան էր տղան, այսօր չէ վաղը կանչվելու էր բանակ, նույնիսկ օր չէր լինում վերջերս, որ Մայիսը կեսկատակկեսլուրջ չասեր որդուն. «Չսովորեցիր, դե գնա բանակ, թող քիթ տրորվի»: Ասում էր այն, ինչ աչքը բացել՝ լսել էր, ինչ որ ասում են իր նման շատերը՝ զորակոչի տարիքի հասած, ուսման հետ գլուխ չունեցող կտրիճ տղերքի հայրերը: Ասելը ասում էր, բայց և մտածում էր հրաժեշտի խնջույքի մասին: Մտածում էր, որ օրերս կմտնի խնայողական դրամարկո, ուր ոտք չի դրել արդեն քանի տարի և երկու հազարից վեցյոթ հարյուր կհանի՝ սեղանի ծախսերի և տղայի գրպանը «մի քիչ փող» դնելու համար: Մտածում էր, բայց ծանուցագիրը ցնցեց նրան: Ցնցեց ոչ միանգամից, այլ ավելի ուշ:

Ծանուցումը դեռևս դեպքը չէր, սպասվող, հարկադիր մի բան էր, որ նորություն էլ չպիտի լիներ: Եվ որի համար առաջնեկ զավակին տղամարդ տեսնող հայրը (երիտասարդ հայրը) պիտի որ հպարտ լինի: Մայիսը իսկապես հպարտ էր: Ընթրիքի սեղան նստելուց առաջ փոքր որդուն ուղարկեց խանութ օղի բերելու, ավագի հետ նստեց օղին խմելու, կշտամբեց նրան, որ օղու վրա ջուր է խմում. «Տղամարդու բան չես անում,— ասաց,— օղին հարամում ես», իսկ հետո, առաջին անգամը լինելով, որդու հետ նստեց նարդի խաղալու, տանուլ տվեց ու զարմացավ, երկրորդ անգամին՝ զարմացավ, երրորդին՝ թքոտեց, զառերից, իր բախտից նեղացավ, բայց և լավ տրամադրությամբ մտավ անկողին: Եվ երբ սկսեց զինակոչիկի երիտասարդ հորը վայել զուսպ խանդաղատանքով մտաբերել որդու կյանքը՝ սկսած մանկությունից... Մանկության վրա էլ Մայիսը կանգ առավ: Որովհետև հիշեց. ավտոմեքենայի համար խնայողությունը սկսվել էր այս տասը ռուբլուց, որ երեխայի առաջին քայլը գցելու օրը, իր ձեռքով, հանդիսավոր գցեց ծոճրակին ճեղք ունեցող գիպսե արձանիկի մեջ: Հենց այդ հիշողությունից էլ խանգարվեց հոր հանգիստը: «Մարդ չես»,— ինքն իրեն ասաց Մայիսը, և դա նրան քիչ թվաց: «Տղամարդ չես»,— ասաց Մայիսը, և դա էլ մեղմ թվաց, քանի որ անձայն, իր ականջին ասելու նման, գաղտնիք ասելու պես շշուկով ասաց: Շշուկով լինելը ոչինչ, ուղղակի անհաստատ ասաց: «Դու հեր չես»,— նետեց կիսաձայն, և ձայնի մեջ իր հանդեպ խղճահարություն և արհամարհանք կար: Ու գնաց: Անկողնում անքուն պառկած, իր հանդեպ աճող զայրույթով Մայիսը մտածում էր. ահա մի տղամարդ, որ հասուն տղամարդ զավակ ունի և ոչինչ չի արել նրա համար: Մի տղամարդ, որ տասնութ տարվա մեջ չի կարողացել իրեն և ընտանիքին խոստացածի տերը դառնալ: Եղածը բան չէր՝ չորս անիվների վրա գլորվող մետաղի ջարդոն, որը պիտի վաղուց ունենար, պիտի վաղուց, եթե խելքը գլխին մարդ լիներ, այդ մեկը դեն գցած, մի ուրիշ՝ կարգին ավտոմեքենա

առած լիներ: Այնինչ այդ էլ չուներ: Եվ մեղավորը բախտը չէր, մեղավորը իր վեց երեխաները չէին, այլ իր ծուլությունը, անպատասխանատվությունը ընտանիքի հանդեպ: Մեղավորը իր անիծյալ հարբեցողությունն էր... Գտավ: Գտնելով չարիքի արմատը, անարգեց իրեն, իր տնավեր սովորությունը՝ ամեն օր, բանթողին, գրաշար ընկերոջ հետ երկու շիշ գարեջուր խմելը ջրերի խանութում... Այն, որը իր միակ թուլությունն էր, միակ ժամանցն ու հանգիստն էր անֆուտբոլ-անուրախ օրերին, որը ինքնուրույն իր գոյությունն էր ընտանիքին ու աշխատանքին նվիրած կյանքի մի կարճ միջոցին: Ու քանի որ խեղճ էր այդ գոյությունը, քանի որ խեղճությունը արդարացում չունի, խեղճորեն շրջեց երեսը, կրկին շրջեց երեսը, շուռումուռ տվեց երեսը անարդար, անպատիժ, անպատիժ մնալուց մոլեգնող ապտակների առջև:

Բութ ու մռայլ էր Մայիսի ոգևորությունը՝ գնաց առաջ: Եվ հաշիվներ արեց, օրերը կոպեկներով բազմապատկեց, կոպեկները՝ օրերով, ամիսները ռուբլիներ դարձան, տարիները՝ հարյուրավոր ռուբլիներ, և դուրս եկավ, որ քոռուփուչ արած տարիների ընթացքում ավելի քան 3000 ռուբլու գարեջուր է խմել: Եվ որ ադ գումարով (ցնդել կարելի է) ժամանակին կարելի էր երկու ավտոմեքենա առնել: Իսկ եթե ծխած չլիներ, որ մեկուկես հազար է նստել, եթե սովորական ավտոբուս նստեր երթուղային տաքսու փոխարեն, եթե մեկ-մեկ էլ չշփանար ու տաքսի չնստեր, եթե ընկերական սեղաններին ձեռքը շուտ գրպանը տանելու թուլությունը չունենար, եթե վերջապես... չապրեր... Չապրեր, էլի, Մայիսը:

Մայիսը հիվանդանոց ընկավ հանկարծակի, հնձված խոտի նման, երբ տղան չէր հասցրել առաջին նամակը գրել: Երեք շաբաթ էր անցել հրաժեշտի խնջույքից: Այդ երեք շաբաթը ամենազգվելի օրերն էին նրա կյանքում, ամենաանտանելին իր և հարազատների համար: Տեսցիք շվարել էին, խոսքաշեն, ուրախ, բարեհամբույր մարդը անսպասելի կերպարանափոխվել, դարձել էր չգիտես

ինչ՝ նեղսիրտ, թթված մի արարած, կատարյալ պատուհաս ընտանիքի գլխին: Առաջին շաբաթը, որ աշխատում էր արտաժամ, տուն էր գալիս մթնով, գալիս էր մթնած, մթնած սեղան էր նստում, սեղանին գարեջուր չէր խմում, ծխում էր էժանագին գարշահոտ ծխախոտ, ծնկներին թառած երեխաներին շոյում էր մեքենայորեն, առանց ջերմության, հարցերին պատասխան չէր տալիս կամ պատասխանում էր անհողաբաշխ գռմռոցով, և տանը ամեն ոք, ինչպես մահացու հիվանդի մնարի մոտ, քայլում էր ոտքի թաթերին: Արտաժամին հետևեց կաթսայատան հերթապահությունը գիշերով, և տնեցիք նրա երեսը գրեթե չէին տեսնում:

Դա հիվանդության գաղտնի շրջանն էր: Հարվածը չհապաղեց: Դեկտեմբերի պաղ, ծյան տեղ անող քամին գտավ նրան կաթսայատան շեմին՝ մետակ վերնաշապիկով, անքուն, ընկճված, իր հունից դուրս եկած մարդուն, ու քանի որ դիմադիր բան չէր մնացել հոգում, որ փորձանքը զարկեր-շրջանցեր, շամփրեց նրա կուրծքը, անցավ թոքերի միջով և սուրաց դեպի ձմռան խորքը:

Մայիսը ապրեց: Դժվար վերադարձ ապրեց դեպի կյանք:

Հիվանդանոցային երկար, սպիտակ օրերին նա կյանքի մասին խորհելու ժամանակ ունեցել էր. կյանքը ավելի բան չուներ նրան տալու, քան այն, որ տվել էր և ավելին չէր տալու, քան պիտի տար այսուհետև: Եվ այսքան պարզ ճշմարտությունը հասկանալու համար երևի թե հարկավոր էր, որ նա մահվան դուռը հասներ: Երևի թե հարկավոր է, որ ամեն մարդ գոնե մի անգամ կյանքում, իր մահկանացուն կնքելուց առաջ (թող դա լինի շատ առաջ) մահվան դուռը հասնի: Եվ սեփական շիրմափոսի պռնկին նստած՝ նայի անտակ խավարին, հետ նայի իր ապրած կյանքին և գոհանա առօրյա բախտով: Գոհանա եղածով, գոհանա գալիքով և ուզենա ապրել այնպես, ինչպես ապ-

րել է, ինչպես քո դառը, քո դժվար, չքնաղ մանկությունը կուզենաս վերապրել:

Այս բանը մեկընդմիջտ հասկանալու համար դեռ պետք էր տանը, սովոր առօրյայից դուրս, տան ու դրկիցների առօրյային կողքից նայելով ապրել: Աշխարհում ոչինչ չէր փոխվել և կարծես փոխվելու մտադրություն չուներ: Նույնն էին առավոտները՝ կանուխ աշխատանքի գնացող տղամարդկանց՝ մուտքի լռության մեջ արձագանքող ոտնաձայներով բացվող. նույնն էին ցերեկները՝ քնկոտ ու լուռ, լի օրերի ցերեկները, որ հիշում էր նա տանը անցկացրած արձակուրդային օրերից. նույնն էին երեկոները՝ գարնան հետ բակ հանած նարդու ախորժալուր շխկշխկոցով, նարդի խաղացող տղամարդկանց խոսքակոճիվ-խաղով և պատշգամբներից կախված կանանց աղերսագին կանչերով և բակում վխտացող երեխաների՝ կանչերին անտարբեր խաղով...

Իսկ նա պիտի մեռներ: Եվ մահով ոչինչ չէր փոխվի աշխարհում: Չէր փոխվի անգամ հինգհարկանի շենքը կյանքում: Միայն մի հուղարկավորություն կծանրանար շենքի տղամարդկանց ուսերին՝ ժամանակավոր անհարմարություն, մինչև որ հողը վար կառներ բեռը կարեկից ուսերից. մի մեծադիր լուսանկար կավելանար իր ննջարանի պատին՝ ժամանակավոր կսկիծ հարազատների համար, մինչև որ ցամաքող աչքերը կսովորեին դրան, ինչպես սովորում են ամեն բանի. տխրության մի ծվեն կկաչեր մուտքից աջ՝ դագաղի կափարիչը հենած պատին և շուտով կցնդեր օդում. տարիների հետ ցնդող հիշատակը կապրեր մերձավորների մեջ և նրանց էլ մահով՝ կջնջվեր աշխարհից: Եվ միայն որդիների անտեր մնացած անձնագրերում, միայն տոհմի բանավոր պատմության մեջ կմնար իր անունը՝ որպես դարավոր շիրմաքարին գրված, առանց ծննդյան ու մահվան թվերի, ժամանակի անհունության մեջ կախված և ոչինչ չասող մի անուն:

Եվ կտիրեր տիեզերական անտարբերությունը ինչ-որ մեկի լինել-չլինելու հանդեպ:

43043

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՔԱՐ ՍԵՖԱՍՏԱՑԻՆ
Կրթական Համալիր
ԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՑԵՐԵԿՎԱ ԽԵՂՃԸ

Սոնան սևերով եկավ: Ոտքից գլուխ սև, գլխին՝ սև լա-
չակ, լաչակի տուտերը սգավոր սեղմությամբ կզակի
տակ ագուցած և այդ սև զսպվածության մեջ՝ թշերը բուրդ
ու կարմիր, կարմիր անխաճել խնձոր:

Որ նա կապույտ աչքեր ուներ, տղամարդիկ ուշ իմա-
ցան, որովհետև Սոնան արցունքն աչքերին եկավ: Որով-
հետև այնպես էր գլուխը քարշ և կոպերը քարշ ապրում,
ինչպես հասունացած մի աղջիկ, որ շլությունն է թաքցնում:
Բայց շիլ չէր Սոնան: Ուրիշ մի արատ ուներ, որ թաքցնել չէր
կարող, եթե թերթերունքներն անգամ ծնկներին հասնեին,
եթե ճակատն անգամ ոտքի թաթերին դիպչեր: Սոնայի մի
ոտքը մեկելից կարճ էր: Իր քույր Մարիամի նման Սոնան էլ
թափով էր կաղում: Սոնայի մայրն էլ էր կաղ եղել, տատն էլ,
տատի մայրն ու տատն էլ... Նրա մորական ցեղի կաղու-
թյունը գնում հասնում էր, երևի թե, մինչև առաջին կաղ
մարդանման կապիկը:

Այն օրը, երբ Սոնան Շեն մտավ, նրա սարսափը ան-
ծանոթ տեղի անամոթ-հետաքրքրասեր աչքերն էին:
Նրա սարսափը՝ ամեն խեղճի պատիժ, ամեն արատավո-
րի կյանքը թունավորող թոկից փախաճներն էին, որ պի-
տի վազեին Սոնայի հետևից և նրա քելքի տնազը անեին:
Նրա երիտասարդ կյանքը ուտեին:

Բայց անամոթ աչքերի հետ առաջին հանդիպումը
չկայացավ: Սոնան Շեն մտավ ուշ աքլորականչին, առանց
հանդիսավոր մուտքի, առանց հանդիսավոր խայտառա-

կույթյան և դրա համար հոգաչափ շնորհակալ էր իր սգավոր բախտից:

Այն օրը, ովքեր վաղ էին արթնացել ու հենց այնպես նայում էին կիսակայարանից հեռացող գնացքին, նրանք, որ մտածում էին, թե այսօր էլ գնացքից իջնող չի լինի, — տեսան, որ կախովի կամրջի վրա երեքը բարձրացան: Կամուրջը ծռնչում ու ծոճվում էր: Անցորդները իծաշարուկ ծոճվում էին, և գնացքի թողած լռության միջով կամրջի ծռինչը հասնում էր քարափի բերանի առաջին տներին: Եկողները կամուրջն անցան, ընկան գետափի բանջարանոցներով անցնող ճանապարհը, բայց դեռ ծոճվում էին: Ում միտքը սուր էր, ճանաչեց Մարիամին, նրա կողքին ճանաչեց Կարոյի ոստոստուն քելքը... Սոնային ճանաչող չեղավ: Սոնան այն չորս մարդկանցից մեկն էր, որոնց մասին 500 շենրցիք պատկերացում չունեին:

Երկու փարթամ կանայք համերաշխ կաղում, աջից ձախ և ձախից աջ էին նետվում, իսկ նրանց արանքում տղամարդու նվաղ կերպարանքն էր, որ իր քաշի երկու ճամպրուկների ծանրության տակ անգամ իր ոստոստուն քելքին չէր դավաճանում:

Ուրեմն այդ երեքից մեկը Մարիամն էր, որ մոր թաղումից էր գալիս ու սևերի մեջ էր, երկրորդը Մարիամի քույրն էր՝ Մարիամի հանգով կաղացող Սոնան, որի միակ հարազատը քույրն էր մնացել, և երրորդը Կարոն էր, որ պակասություն չունենալով՝ բարեմասնություն էլ չունեւր և այսուհետև իր տանը Շենի երեք կաղերից երկուսին էր պահելու:

Ճիշտ է, կաղ էր Մարիամը, բայց նրա կոնքերն ու կրծքերը Շենում քչերը ունեին: Ով էլ որ ուներ, գլխին տեր ուներ, և այդ ինչքի տերերը հարու տալու պատրաստ ցլերի նման էին Շենում ման գալիս: Միակ անտերը Մարիամն էր, որ Կարոյի սև բախտից՝ ամեն ինչից մի չորս

մատ ավել ուներ և թաքցնել չէր կարող: Ոչ էլ թաքցնել կուզեր, որովհետև թաքցնելու ուրիշ բան ուներ. իր բնածին կաղությունը: Եվ այդ պակասության հետ էր միամիտ Կարոն անխռով ամուսնական կյանքի իր հույսը կապել: Եվ երբեք չէր անցել նրա տկար մտքով, որ վտիտ ու չոռոտ Մարիամը, երբեմնի տասնվեց տարեկան անսնունդը երկու տարում այսպես լայնքին ու երկայնքին կտա, այնպես կտա ու կանցնի Կարոյին, որ ունեցած-չունեցածով պատուհաս կդառնա ամուսնու գլխին: Եվ որ կգա ժամանակը, երբ Կարոն կնոջ կերպարանքով այդ արհավիրքը մասամբ Թևոսին կզիջի և կգոհանա իր բաժին Մարիամով: Եվ որ այդ մասին վերջին ծծկերն իսկ կիմանա, մինչդեռ Կարոն կձևացնի, թե ոչինչ չգիտի... Որովհետև կոտոշներ չի ունեցել նա ծնված օրից, որ իր փարթամ էգին տիրություն անի: Որովհետև... անտեր մեծացած անտերի տիրություն արածը ինչ պիտի լինի:

Ուրեմն, Մարիամի տերը Կարոն էր: Ու նաև Թևոսն էր: Եվ, ուրեմն, երկու տիրոջ ծառա Մարիամը Շենի միակ անտերն էր: Դե ինչպե՞ս չհավատաս ստողին, թե Մարիամի պակասությունը տղամարդկանց համար չորրորդական բան էր:

Բայց ղվ կհասկանա տղամարդկանց բնույթը: Մարիամը միանգամից դարձավ Շենի առաջին այլանդակը: Ինչ էր եղել Մարիամին- ոչինչ: Ինչ որ եղել էր, տղամարդկանց էր եղել: Տղամարդիկ տեսել էին Սոնայի կաղությունը, Սոնայի ջահել, տաքարյուն կաղությունը: Եվ, իհարկե, նաև Սոնայի անտերությունը:

Հասկանանք տղամարդկանց. Մարիամին էլ ինչ-որ բան, այնուամենայնիվ, եղել էր: Իհարկե, ոչ միանգամից, այլ աստիճանաբար: Շենում ապրելու տասը տարիներին: Մի խոսքով, գեղեցկուհի չէր Մարիամը, թեկուզ և անտեր էր: Բայց ղվ կնկատի եղածը, եթե մարդկանց աչքի առաջ էր եղել, օրերով, ամիսներով, տարիներով էր եղել:

Ո՛վ կնկատեր, եթե չգար Սոնան... եթե Մարիամի ջախելությունը Մարիամի կողքը չդնեին:

Այսինքն, թքած ուներ Մարիամը, որ տղամարդիկ իր արատը տեսան: Իր անտերությանը հանդերձ, իր հմայքների հանդեպ տղամարդկանց նկրտումներով հանդերձ, կյանքում երկու տղամարդուց ավելի չէր ունեցել: Այդ երկուսը իրեն հերիք էին: Մեկը՝ օրինականը, մյուսը՝ անօրինականը: Միայն թե առաջինը հենց նա էր՝ անօրինականը, որ Սոնայի մեջ Մարիամի երիտասարդությունը տեսավ:

Թևոսի համար պարզ էր, որ Սոնան այգիներում է աշխատելու, ուրեմն՝ իր ձեռքի տակ է լինելու: Որ Սոնան դաշտի աշխատող էր, վրայից էր երևում. առողջ էր, պնդակազմ, հինգերորդ դասարանի կրթություն ուներ, օրիորդական շարժումն չուներ... Մի խոսքով, եթե ոչ ազնվացեղ, գոնե ուժեղ զամբիկ էր, որին կամ լծել էր պետք, կամ հեծնել: Եվ գլխավոր գյուղատնտես Թևոսը որոշեց, որ այդ բանը անողը ինքն է լինելու: Հասկանալի է, որ Թևոսը Շենի տաքգլուխների նման չէր մտածում, թե Սոնան առաջին պատահողի հետ, ում ոտքն ու ձեռքը տեղն է, պատահած դեզի տակ կպառկի: Հասկանում էր, որ աղջիկը, ինչ պակասություն էլ որ ունենա, ամուսնանալու հույսը չի կորցնում: Նույնիսկ լավ կլիներ, եթե Սոնան ամուսնանար: Եվ Թևոսը, որ, այսպես թե այնպես, Սոնային փեսա էր գալիս, վճռեց, որ Սոնային ամուսնացնողը նույնպես ինքն է լինելու: Թե ում հետ, դեռևս չգիտեր, բայց գիտեր, որ անպայման Կարոյի նման մեկի հետ: Իսկ մինչ այդ հարկավոր էր Սոնային դրսի ոտնձգություններից հեռու պահել: Ներսից՝ Կարոյի կողմից Թևոսը ապահով էր: Կարոյի քաշն էլ գիտեր, սիրտն էլ: Թեկուզ և Սոնան քեռայրի հետ էր ապրում, մի կենտ սենյակում էին ապրում, Կարոն, ինչքան Թևոսը գիտեր, քենու հետ կարգին չէր էլ խոսում: Խոսելիս էլ լիներ, տակ-

նիվեր էր խոսելու: Իսկ թե ինչ էր լինելու կնոջ հետ տակ-
նիվեր խոսող տղամարդու ասելիքը, Թևոսը Կարոյի և
Մարիամի օրինակով գիտեր:

Բայց մի բան, այնուամենայնիվ, Թևոսը հաշվի չէր
առել: Այն չէր հաշվի առել, որ Մարիամի վերադարձած երի-
տասարդության հրաշքը ինչքան որ իրեն... գոնե մի այդ-
քան էլ Կարոյին կարող էր հուզել: Վերջիվերջո, Կարոն իր
կնոջ հետ ավելի երկար էր ապրել և նրա ավելի վաղ երի-
տասարդությունը գիտեր: Նշանակություն չունի, որ այդ
երիտասարդությունը չոռոտ էր եղել: Կարոն հիմա համոզ-
ված էր, որ դա Սոնայի վառվռուն երիտասարդության
նման է եղել: Եվ մի բան էլ, որը ոչ միայն իր հաղթանակով
շփացած Թևոսը, այլև ոչ ոք աշխարհում, Կարոյից սպասել
չէր կարող:— Կարոն վրեժ ուներ լուծելու: Իր սեփական
կնոջ օրինական-երկրորդականը լինելու համար, այն բանի
համար, որ տասը տարի իր ամուսնական մահճի պռնկին է
պառկել, վագոնի վերին թախտին պառկածի վախը
սրտում է պառկել: Վրեժ, որ աշխարհից թաքուն և Կա-
րոյից էլ թաքուն ապրել էր նրա ջրիկ երակներում ու մի
պուտ արյուն չէր գտել, որ բռնկի, պայթի... Ու հիմա գտել էր:
Գտել էր Սոնայի հրաշքով տաքացած արյունը: Հատու-
ցում էր լինելու: Եվ հատուցման հողը Սոնան էր՝ Թևոսի
ապագա զոհը: Թևոսի ապագա զոհը՝ այս մեկը Կարոն
հաստատ գիտեր: Տղամարդու խորունկ մի բնազդով, որ
թվում է չպիտի ունենար, բայց ուներ՝ Կարոն զգում էր, որ
քույրը քրոջ ճանապարհով է գնալու, և ինքը դրան խանգա-
րել չի կարող: Միայն մի բան էր մնում, որ Սոնայի հարցում
Թևոսը առաջինը չլինի: Առաջինը լինի Կարոն, ապա նոր
թեկուզ բովանդակ աշխարհը լինի, թեկուզ նույնիսկ...
Թևոսը լինի:

...Թե չէ դժբախտ պերանը կարող է փակել տղամար-
դու խեղճություն Կարոն, ինչ մի հաղթանակ-գաղտնիք
կունենա, որով դիմանա, եթե ասեն, եթե հետագայում

ասեն, թե Թևոսը երեք կին է պահում. մեկը՝ իր տանը, երկուսը՝ Կարոյի տանը...

Եվ իսկապես ասելու են:

Որովհետև հենց այդպես էլ լինելու է:

Կարոյի արյունը դարձյալ ջուր է կտրելու, Թևոսը, Սոնային չամուսնացրած՝ իր ուզածով է անելու, և իրականանալու է Կարոյի մարգարեությունը, թե արյունը արյան ճանապարհով է գնալու:

Իսկ մինչ այդ Կարոյի ներսում փոթորիկներ են լինելու: Եվ մի բուռ տղամարդ Կարոն, ցերեկվա այդ խեղճը, Սոնայի գալուց հետո գիշերները կրակ է կտրելու և ոչ միայն ապշած Մարիամի, այլև ջահել, ամոթխած Սոնայի քունն է փախցնելու:

ՀՈԳԵՀԱՆ

Ե նոքի շալվարը արդուկած է, ծալքերը սուր են ածելու սայրի նման, և այնպես է նա խանութում ճեմում, ասես պատահողին և պատահած բան դրանցով պիտի թրատի: Ենոքը ճեմում է խանութում, ծխախոտի ծուխը փչում առաստաղին, վաճառասեղանների երկայնքով մեկ գնում է ու գալիս և ոչ մեկի մտքով չի անցնում նրան գործի դնի: Այսպես է, այն օրերին, երբ սափրված ու տոնական հագնված է աշխատանքի գալիս, մինչև կեսօր մատը մատին չի խփում: Մինչև կեսօր ով ասես լեզու է քորում Ենոքի արդուզարդի և ձեքծեքալու վրա, նրան քսան տարով երիտասարդացնում՝ ժամադրության է ուղարկում, ամուսնացնում է նորից, այլևայլ երևակայական փորձանքների մեջ քաշում... միայն թե նրա բուն ժամադրության մասին ոչ ոք չի կասկածում: Արվարձանային խանութի տնավարի անմիջականությամբ հաճախորդների վրա ուշադրություն չդարձնելով, հաճախորդներին սպասարկելու միջոցին, «ձեռքի հետ» Ենոքին ձեռ են առնում, ձեռ առնելով՝ անբանությունը հանդուրժում են և միայն այն դեպքում, երբ պահեստից մի շատ ծանր բան է հարկավոր լինում բաժին բերել, իբր թե խնդրելով՝ ասում են. «Ենոք, մի օգնե՛ս»: Ենոքը մեծահոգաբար բռնում է շաքարի պարկի քնջից կամ ոտքով գորում բերում է աղ դրած ձկան տակառը, ապա դեմքին զզվանքի ծամածռություն սարքելով, կոպիտ թաթերի հատու, նրբագեղության միտող հարվածներով թափ է տալիս շորերը, մինչև անգամ սղալում-սանրում է ճաղատը բոլորող ցանցառ մազերը:

Բեռնակիր բանվորի շփանալը տևում է այնքան ժամանակ, քանի դեռ խանութի վարիչ Մարգոն չի ժամանել: Երբ Մարգոն տաքսիով ժամանում է, Ենոքի սեթևեթ կեցվածքի հետքն անգամ չի մնում: Ենոքը հագնում է քաթանե սև խալաթը և օրվա մնացած մասը անց է կացնում խանութի պահեստային խորշերում: Մեծ չէ խանութը՝ հինգ թե վեց աշխատողով արվարձանային գաստրոնոմ, և պարզ է, որ նրա համար այնքան էլ անելիք չի լինում: Բայց Ենոքը զբաղմունք գտնում է: Եթե ինքն էլ չգտնի, վարիչը որևէ գործ անպայման հորինում է: Այնպես որ, երբ Մարգոն խանութում է լինում, Ենոքը վաճառասրահում երևալու մասին չի էլ մտածում: Եվ կես կամակոր-կես հարկադիր աքսորի մեջ, իր սիրո ժամի սպասումի մեջ նրա սիրտը շրջապատի տխմար անտեղյակությունից պայթում է: Ենոքի գաղտնիքը իր անութում չի տեղավորվում: Ինչպես տեղավորվի, եթե գերեզմանն անգամ գաղտնիք չի պահում: Հապա հրն է սիրո գաղտնիքի հմայքը, եթե հուր-հավիտյան պիտի գաղտնիք մնա: Թող չիմանան՝ ինչն է գաղտնիքը, չիմանան՝ ում հետ, բայց գիտենան թեկուզ, Ենոքը այդ բանը ունի: Որ նա էլ կարող է մի թաքուն բան ունենալ, ինչպես աշխարհում բոլորը ունեն... Ինչ է Ենոքի ուզածը՝ որ այդ պատմությունը բերանի ծամհն դառնա: Ամենևին: Տղամարդ է Ենոքը, խուփբերան տղամարդ է: Նրանցից չէ, որ սիրո սավանները դրոշի պես ճոճում են: Բայց չլինէր մեկը, որ երկուսուկես տարվա մեջ գեթ մի անգամ Ենոքին խեթ աչքով նայեր: Մեկը, որ նրա ժամադրությունների մասին գոնե կասկած տաներ: Կասկածը գնար-գնար, բերնեբերան անցներ և Ենոքին մի ուրիշ տեսակ նայեին, Ենոքի աչքերի մեջ իրենց կասկածի ժխտումը կամ հաստատումը տեսնել ուզեին, հետաքրքրասիրությունից ամբողջովին աչք ու ականջ դառնային, իրար ականջ մտնեին, մտնեին իրար բերան... և Ենոքը այն ժամանակ իրեն խկական տղամարդ պահեր: Այդ շշուկների ու քչփչոցների մեջ, թերահավատ-խանդոտ-հարգալիր նայվածքների

մեջ իրեն այնպես պահեր, իբր ոչ տեսնում, ոչ էլ լսում է, իբր ոչ տեսնելու և ոչ էլ լսելու ցանկություն ունի... Եվ, վերջիվերջո, ինչ են քիթները ուրիշի գործերի մեջ խոթում, մարդ իրավունք չունի մի գաղտնիք ունենա...

Այնինչ կասկածող չկար:

Եվ հիմ մտքով կանցներ. վարիչը Ենոքին կեսբերան բարևի արժանացնում կամ չէր արժանացնում: Ո՞վ կկասկածեր, եթե Մարգոն Ենոքին օր ու արև չէր տալիս. աշխատանքից ուշանալ արգելում էր, բացակայել արգելում էր, չեղած տեղից գործ մոգոնում, մի վայրկյան դադար չէր թողնում... Ու իբր այսքանը քիչ էր, ամսագլուխ գրավոր նկատողություն էր անում աշխատանքից ուշանալու համար, աշխատանքի ժամին խմած լինելու համար, չսափրված աշխատանքի գալու համար...

— Ինչ ես տեղի-անտեղի նկատողություն գրում,— երրորդ նկատողությունից հետո վարիչի առանձնասենյակն էր ներխուժել Ենոքը:

Գլուխը գրասեղանին հակած, վարիչը հոնքն անգամ չէր շարժել:

— Բռունցք մի արա, ես քո կնիկը չեմ,— առանց Ենոքին նայելու, հանգիստ խոսել էր:

— Բա ես քո ինչն եմ,— ընդվզել էր Ենոքը:

Վարիչը չէր պատասխանել:

— Ձեռքիցդ ինչ է գալիս... տանը անելիք տղամարդու գործ,— հարցրել էր վարիչը:

— Ամեն ինչ:

Ենոքը չէր պարծեցել: Հինգ տարի խոպան էր գնացել՝ իբր փող պիտի բերեր ավտոմեքենա առներ, երեք տղաների համար կոոպերատիվ բնակարաններ գրվեր, իբր երկու դուստրերին չտեսնված օժիտ պիտի տար, համենայն դեպս՝ կնոջը խոստացել էր, ամեն տարի գարնանը խոստանալով գնացել էր, ուշ աշնանը եկող տարվա խոստումով եկել էր և այդ հինգ տարիների պանդխտությունից

այն էր մնացել, որ Ենոքը հյուանություն, ծեփագործություն, ներկարարություն էր սովորել:

— Ամեն ինչ:— Կրկնել էր Ենոքը:

— Դե, ուրբաթ կգաս տուն, մի թեթև գործ կա անելու,— գործնական ասել էր Մարգոն և Ենոքին նայել մի հայացքով, թե՛ «մտքիցդ ուրիշ բան չանցնի, բայց բացբերանություն, համենայն դեպս, չանես»:

Շաբաթ օրը Ենոքը այնպես էր աշխատանքի գնում, ասես հորական կալվածքն էր գնում: Ասես ինքն էր խանութի վարիչը, «վարիչի վարիչը»— քթի տակ խնդմնդում էր Ենոքը: Ծխախոտը բերանի անկյունում և ձեռքերը գրպաները դրած, իր վիճակի փոփոխությունը չտեսնող անցորդներին ներողամիտ ժպտալով, արթնացող քաղաքի միջով հաջողության հետ իր ժամադրությանն էր գնում Ենոքը: Գնում էր խոստումնալի առավոտով հարբած, քաղաքի կարմիր տանիքների վրայով, ինքը՝ հին անվանի դուշբագ, հիմա, երիտասարդ օրերի նման, պիտի մատները բերանը տանի ու սուլի՝ այնպես, աղավսիներին այնքան հասկանալի, որ քաղաքում միայն ինքն էր կարողանում, և մոգական այդ սուլոցով արթնացող քաղաքի փողոցներից ամեն կենդանի արարած պիտի մեկեն օդ բարձրանա, թևին տա և պարի նրա զմայլված հայացքի առաջ:

Այսպես էր աշխատանքի գնում Ենոքը և չգիտեր, որ ընկնելու է այն որսաշան վիճակը, որի երախից զարկված հավքի տրոփող մարմինը խլում, իրեն հեփհե զարմանքով են թողնում: Մարգոն դուրս շարտեց նրան առանձնասենյակից, և Ենոքը դեռ երկար ժամանակ ծնրում էր արյան համը առած լակոտի նման:

Այդ ամիս Ենոքը նկատողություն չստացավ: Նկատողությունն անգամ վերաբերմունք էր, նկատողությունից էր սկսվել այն, ինչ կյանքը հունից հանել էր, և ինչի ասես չդիմեց Ենոքը՝ Մարգոյի ուշադրությունը գրավելու համար: Ապարդյուն: Ենոքը ցեխոտ շեմափայտ, ոտքի տակ ընկած

ձավարի պարկ էր՝ Մարգոյի հայացքը լոք տալիս, անցնում էր վրայով:

Այն առավոտից վեց շաբաթ էր անցել, երբ Ենոքը, ի վերջո, ուշադրության արժանացավ:

— Ուզում ես աշխատանքից հեռացնենմ,— սպառնաց Մարգոն ի լուր ամենքի:

— Չեմ ուզում,— խռոված քրթմնջաց Ենոքը:

— Եթե չես ուզում, պիտի մարդավարի աշխատես:

Ճար չունեք Ենոքը, սկսեց մարդավարի աշխատել: Ժամանակին աշխատանքի էր գալիս, ժամանակին գնում էր, վաճառասրահում չէր ծխում, օրումեջ սափրվում էր և ամեն օր չէր խմում, եղածը եղած է, մտածում էր, երազի նման մի բան, կին է, ո՞վ դրանից մի բան կհասկանա, ուզեց՝ ուզածը արեց, հիմա էլ չի ուզում՝ չի անում, ինչ կարող ես անել: Վերջապես ո՞վ է Ենոքը Մարգոյի համար, իրենից ինչ է ներկայացնում նրա դիրքի, կարողության, շրջապատի համեմատ: Ոչինչ՝ հասկանում էր Ենոքը: Հասկանալով մոռացության էր տալիս, մոռացության տալով մոռանում էր այն հեռավոր առավոտի երազանքը, թե այսուիետև խանութի տերը կդառնա: Թող որ չի ներում իր կրթությունը, մտածել էր, ոչինչ, որ յոթնամյակի վկայական անգամ չունի. Մարգոյի թեթև ձեռքով դեն կնետի բեռնակիր բանվորի պատանքը, սպիտակ խալաթ կհագնի, ձեռքը կառնի մսավաճառի կացինը, կացնով փող կկտրի, այսուիետև նրանց հետ ոտք կմեկնի, ովքեր ավտոյով գալիս Մարգոյին քաղաքից դուրս են տանում, ամռանը ծովափ են տանում, տանում են ուր աչքները կտրեց, որովիետև փողը սահման չի ճանաչում, փողը վերմակդ է, ինչքան երկար եղավ, այնքան երկար են ոտքերդ:

Մինչդեռ Ենոքի վերմակը թաշկինակի չափ էր: Ու հասարակ այդ բանը ինքը չէր հասկացել: Հասկացավ՝ սթափվեց Ենոքը: Նայեց իր վերմակի չափին, նայեց ոտքերը մեկնելուն ու ծնկները ծալեց, հազար տեղից ծալվեց, կուչ եկավ, սսկվեց քաթանե իր պատանքի մեջ:

— Հիմա հասկացա՞ր խանութում քեզ ոնց ես պահելու,— իր առանձնասենյակում հարցրեց Մարգոն:
Ենոքը հասկացել էր:

— Ու իմացած լինես, Ենոք, դու երեխա չես, ոչ էլ ես քո մերը, որ երբ ձենդ գլուխդ գցած ծիծ ուզես՝ ծիծ տամ քեզ: Ծիծաղը խեղդելով Ենոքը գլխով արեց:

— Դե գնա, Ենոք, ու սրանից հետո կաբինետս ոտք չդնես:

Ենոքը ոտքը կախ գցեց, վիզը կոտրելով նայեց առատաղին, նայեց մզլած պատերին ու.

— Տանը... գործ-մործ չկամ անելու,— հարցրեց:

— Կճարվի,— փափուկ ժպտաց Մարգոն:

Ենոքը մտավ պարտադրված դերի մեջ: Խանութում առաջվա պես նա Մարգոյի ենթականերից էր, ենթականերից ամենավերջինն էր, որը գլուխը կախ աշխատում էր, վարիչի խստությունն ու քմայքոտությունը խոնարհաբար տանում էր և միայն ժամադրության օրերին առավոտը ծեքծեքում, շփանում էր խանութում, ապա քաշվում իր սև արտահագուստի մեջ և անհամբեր սպասում իր սիրո ժամին: Օրերով սպասում էր իր սիրո օրվան:

Այդ օրը Ենոքը անձանաչելի էր դառնում: Մարգոյի տանը իրեն պահում էր տանտիրոջ նման: Մարգոյի հետ վարվում էր քսան տարվա ամուսնական կյանքով ապրած, կնոջից ձանձրացած, կնոջը չարչարող, հարբեցող-բժախնդիր ամուսնու նման: Այն տարբերությամբ միայն, որ այդ բոլորի հետ Մարգոյին սիրում էր նաև: Այդ բոլորը սիրով էր անում: Իսկ Մարգոն՝ խանութի սարսափը, խանութում՝ Ենոքի սարսափը, իր տանը, իր բեռնակիր բանվորի առաջ կամակատար, գրեթե չխոսկան հարս էր դառնում: Ենոքի գալուն պես ճաշը կրակին էր դնում, Ենոքի ուզած խմիչքը սեղանին էր դնում, լողարանի հնոցը վառում՝ Ենոքի մեջքը օժառում, տրորում էր, ինչ որ Ենոքի խելքին փչեր՝ անում էր, և ինչ էլ որ աներ՝ սիրով էր անում: Իր միակ դատերը ամուսնացրած ու մենակ, ամուսնուն

վաղ կորցրած՝ մենակ, ուրիշ տղամարդիկ տեսած՝ մենակ մնացած, Մարգոն՝ անկախության սովոր մի կին, իշխող, իշխելու սովոր կին՝ իր տանը մի ուրիշ կին էր դառնում: Շաբաթվա մյուս բոլոր օրերը Ենոքին տանջում, տանջելով չտեսնելու էր տալիս և այս եզակի օրերին սիրում էր: Սիրելով թույլ էր տալիս, որ Ենոքը իր քաշածի փոխարեն հատուցի: Եվ Ենոքը հատուցում էր: Այդ օրերը վայելում էր սանձարձակ, ինչքան որ սիրելով սանձարձակ են լինում, վայելում էր իշխելով, տղամարդավարի, քսան տարվա ամուսնական կյանքի բոլոր կանոններով... բայց և ամեն անգամ, հեշտագին խոնջանքի մի պահի, մեղմորեն գանգատվում էր.

— Խանութում հոգիս հանում ես, շան աղջիկ: